Իսկ Գեր. Այվազեանի վան ժամե-
լէն մինչ օրս, ժողովրդեան դասերէն
ամեն կարգի անձինք, զանազան ար-
հեստապետութեանց ներկայացուցիչք
կը փութան բարի գալուստի, զորս
սիրալիր կերպիւ ընդունելով, կը յոր-
դորէ չի յարել ո՛չ մի կուսակցու-
թեան.

մէ հետեւեալ մի քանի տողերը կրնանք
քաղել.

«Բաղդաւոր է ճէյմս Պրայս որ ար-
ժանացաւ վերելից ի կատար... այլ բաղ-
դաւոր և այնու՝ որ ձեզի պէս տաղան-
դաւոր մէկը ի լոյս ընծայեց իւր գը-
րուածքն. Ձեր թարգմանութիւնն այն-
քան ընտիր է որ կարող եմ ասել թէ ար-

# ՅՈՎՀԱՆ. ԷՖ. ԳԱԼԸՆԵԱՆ

ԵՂԲԱՅՐ

ՏԻԳՐԱՆ ԷՖԷՆՏԻ ԱԴԱՄԵԱՆԻ

ԽՄԲԱԳԻՐ ՃԷՐԻՏԷԻ ՇԱՐԳԻՅԷ ԼՐԱԳՐՈՅ

Ցետ անողոք հիւանդութեան այսօր
կնքեց իւր մահկանացուն, Քօրթաքէօյ
իւր բնակարանը, ի հասակի 52 ամաց,
ի խոր սուգ համակելով իւր մայրը,
զաւակունքը, եղբարքը, քոյրերն, ա-
մուսինն եւ համայն ազգականքն ու
բարեկամները.

Ցուղարկաւորութեան տխուր հան-
դէսը պիտի կատարուի վաղը չորեք-
շաբթի՝ յունիս 12 ի ժամ 8, Սկիւ-
տար Եէնի մահալլէ ի Ս. Կարապետ
եկեղեցւոյ, ուր փոխադրեալ է մար-
մինն, և անտի պիտի ամփոփուի տեղ-
ւոյն գերեզմանատունը։

11 Յունիս 1891, Կ. Պոլիս

# ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ
ԵՒ ԱՍՏԻՃԱՆՔ

Եէմէնի կուսակալ և է. զօրաբա-
նակին հրամանատար անուանեցաւ Ֆէ-
րիդ Հասան Էտիպ փաշա, անդամ Զի-
նուորական Քննիչ Յանձնաժողովոյ։

— —

Իւլայի երկրորդ աստիճան տրուե-
ցաւ կայս. պալատան ուտեստի ամ-
բարանոցին տնօրէն Հիւսէյին պէյի և
կարասեաց տնօրէն Աքիֆ պէյի, ի
վարձատրութիւն իրենց բարւոք պաշ-
տօնավարութեան։

Սանիյէի երկրորդ աստիճան՝ Մա-
նասդըրի երեւելիներէն Ապտիւրրա-
զագ պէյզատէ Զիհնի պէյի, իւր ար-
ժանաւորութեանը համար։

— —

Ի ՀԱՅՍ. ՊԱԼԱՏ

Դատական նախարար Վահմ. Րիզա
փաշա երէկ կայս. պալատ գնաց և
ստացաւ Վեհ. Սուլթանի հրամանները.

ԱՈՒՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ
ԱՏԱՄԱՆՑ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ
ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Ա. ԳԸԼՃԵԱՆ

Կեդրոնատեղին է Պաղչէ-Գաբու Ռուսական շո-
գենաւային ընկ. ճիշդ դիմացը թիւ 14 Ատամնա-
բոյժ Ա. Գըլըճեանի սենեակը. կը վաճառի նաև
Չրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներու խանութը և
Սկիւտարի Նաւամատոյցը Ջրավաճառ Սերոբիկ
աղայի խանութը։

Գին 2 դահեկան 2—3

ԱԶԴ

Պ. Քալֆօբուլօ եղբարք պատիւ
ունին ծանուցանել հասարակութեան
թէ իրենց նորաձեւութեան վաճա-
ռանոցը փոխադրած են ի Բերա, Մեծ
փողոց, թիւ 345, Պոն-Մարշէի դիմաց։
Այս առթիւ ամեն տեսակ նիւթոց
վրայ կարեւոր զեղչեր կատարուած են։

8—25

# ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱԶԳ ՕՐՈՒԱՆ

ՅՈՒՆԻՍ 23 ԹՈՒԱԿԱՆԱՒ

ԵՐՐԵԱ՞Կ ԹԷ ՔԱՌԵԱԿ

Անգլիոյ Երեսփ. Ժողովոյն մէջ, արտա-
քին գործոց խորհրդական Սըր Ճէյմս
Ֆերկիւսըն յայտարարեց թէ անգլիական
կառավարութիւնը մասն չունի երրեակ
նիզակակցութեան մէջ, և ադոր վերա-
բերեալ ոև է ձեռնարկ չէ բրած. Կարելի
չէ պահանջել որ կառավարութիւնն ե-
րեսփոխանական ժողովոյն հաղորդէ սոյն
նիզակակցութեան պայմանները, զորս խոր-
հրդաւոր ըլլալով իմացած կրնայ լինել և
որոց հրատարակումն արժան չեն դատած
շահակից կառավարութիւնք։

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ Ի ԿԱՒԿԱՍԻԱ

